ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEE1-6831-4876-B311 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ԱՊԱՅՈՒՅՑՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ

ԴԱՏԱԿԱՆԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/10150/02/25 ք. Երևան
20 Նոյեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջինատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս (այսուհետ նաև՝Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/10150/02/25 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«ԱՄ ՔԼԻՆԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ թիվ ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-34 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2025թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ԱՄ ՔԼԻՆԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, անվավեր

ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Գ. Վարդանյանի) 08.10.2025թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, ինչի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 17.11.2025թ. որոշում է կայացրել Դատարանի 08.10.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացնելու մասին:

Հայցադիմումը մակագրվել և էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 18.11.2025թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից անհրաժեշտ է պահանջել թիվ ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-34 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ, այն համարել ներկայացված սկզբնապես ներկայացնելու օրը և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 26.12.2025թ.՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
Պատասանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել թիվ ՀՀ ՆԳՆ ՀԲՄԾՁԲ-2025/Թ-34 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.11.20 15:16:08 AMT

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am